



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՄԱՆՈՎԿՆԱՆ
Առաջնորդ

Archbishop Simon Manougian, Primate

Թիւ 11830
Մարտ 12, 1965

Արժանաշնորհ
Տ. Միքայէլ Պուլթերո
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Միսկան Խորհուրդի
նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Միքայէլ.

Ստացած ենք Ձեր 1965 Փետրուար 2 թուակիր տեղեկագիրը, որով
կը տեղեկացնէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ Յունուար 30ին գումարուած
Ձեր Տարեկան Միսկան Ժողովին մէջ կատարուած է Միսկան Խորհուրդի
մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը կը
խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատար-
ուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները իբրեւ
անգամ Միսկան Խորհուրդի.

Տիարք՝ Կրէկորի Աբրահամեան
Մօնթի Բակարիկեան
Փիթըր Եղիազարեան
Ուուլթըր Կիրակոսեան

Կը յանձնարարենք որ Միսկան Խորհուրդի տեղեկագիրը եւ հաշ-
ուեկշիւրը, ինչպէս նաեւ Միսկան Խորհուրդի նոր դիւանի անուն-հաս-
ցէնները Առաջնորդարան զրկէք առաջին առիթով:

Այսու, օրհնելով Միսկան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք
Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէու-
թեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյն եւ ի Հոգեւոր շինու-
թիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիբաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթաբար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի